ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 20.04.2021թ. հ.152 գրության՝ տեղեկացվում է.

Շենգավիթ վարչական շրջանի Աէրացիայի փողոցի հ.2/2 հասցեում գտնվող շենքը վերջին անգամ հետազոտվել է 2016 թվականին և համաձայն «ՔԾՓԿ» ԲԲԸ-ի կողմից 19.07.2016թ.-ին տրված եզրակացության՝ Աէրացիայի փողոցի հ.2/2 շենքը գնահատվել է 3-րդ աստիճանի վնասվածության: Այն հաշվառվել է ամրացման ենթակա շենքերի ցանկում, սակայն ներկայումս Երևանի քաղաքապետարանի աշխատանքային ծրագրերով բազմաբնակարան շենքերի ամրացման աշխատանքներ նախատեսված չեն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մինչև 2011թ. Երևանի քաղաքապետարանի ծրագրերով ամրացվել են թվով 54 երրորդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքեր, այնուհետև որդեգրվել է ծրագիր, ըստ որի՝ երրորդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերում ամրացման աշխատանքներ չեն իրականացվի, այլ կձեռնարկվեն համապատասխան միջոցներ ներդրողներ գտնելու ուղղությամբ՝ շենքը քանդելու և տեղում նորը կառուցելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ